շահառուն հանդիսանում է Երեմ Սարգսյանը,..., ապա սույն դեպքում, Պատասխանողի կողմից ներկայացվել են ապացույցներ կայացված որոշումների հիմքում ընկած հանգամանքները հաստատելու կապակցությամբ:

Դատարանը գնահատելով գործում եղած ապացույցները, ղեկավարվելով ներքին համոզմամբ, գտնում է, որ հայցապահանջը ենթակա է մերժման:

6.Դատական ծախսեր.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հայցվորի կողմից ներկայացված հայցով վճարվել է 80.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար: Հետևաբար պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-194 հոդվածներով, դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

«Էսզեթ Ֆարմ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ Երևանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան ՀՄ-ի՝ Երևանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամի և «ԷՍԶԵԹ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի միջև 13.03.2024թ.-ին կնքված թիվ ԷԱՃԱՊՁԲ-2024/16-12-ԵՊԲՀ-1 պայմանագիրը 13.09.2024թ.-ին Երևանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամի կողմից միակողմանի լուծելն անվավեր ճանաչելու և «ԷՍԶԵԹ ՖԱՐՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամի ռեկտորի 20.09.2024թ.-ի թիվ 09/1347 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Նաիրա Ավետիսյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am